ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEA7-6998-4F61-A1BD հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՁԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/0884/02/26 | ք. Երևան
30 Հունվարի 2026թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Գրիգորյանս (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով <<Մայ Փեյջ>> ՍՊԸ-ի հայցադիմումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր <<Մայ Փեյջ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Երևանի

քաղաքապետարանի՝ թիվ ԵՔ-ԳՀԾՁԲ-25/154 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժ/պ Գևորգ Ղարիբյանի ծանուցմամբ կայացված թիվ ԵՔ-ԳՀԾՁԲ-25/154 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-25/154 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրով «Մայ Փեյջ» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայության արդյունքը, այն է՝ տեղեկատվական տեսահոլովակը և 3D անիմացիա 2D էլեմենտներով անիմացիոն տեսահոլովակը ընդունել պարտավորեցնելու, ինչպես նաև «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» 09.01.2026թ. N 55-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Էլեկտրոնային համակարգում հայցադիմումը մակագրվել է 29.01.2026թ. ժամը 21:31-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր:

Միևնույն ժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանող Երևանի քաղաքապետարանից անհրաժեշտ է պահանջել թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-25/154» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 24.02.2026թ.:

Պատասանող Երևանի քաղաքապետարանից պահանջել թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-25/154» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2026.01.30 13:42:07 AMT

Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am